

ըցն ի Հերովդէս նշխարք պահիւն» (Կաղ. էջ 422): Անոնց տօնը՝ ըստ Երուսաղէմացիներու սովորութեան, ինչպէս մեր հին Ճաշոցները կը յայտնեն, Մայիսի մէջ կը կատարուի:

ե) Անխնոր հացը եւ մտաւորն մասնակները. — Ուղեգիր մը կը պատմէ այլ և այլ ազգերու ուխտաւորներուն մէկ սովորութիւնը որ կը կատարուէր Ծննդեան գիշերը: Ուխտաւորները մոգերու ինկած աստղին հօրին ջուրէն մաքուր ալիւրով բաղարջ հաց կը չինեն: Ասոր կը վերագրէին մեծ զօրութիւն: Նմանապէս համայնագեղ մը կը նկատուէին ժայռին այն մասնիկները զոր ուխտաւորները առանց խղճահարութեան կը փրցնէին մսուրէն, ինչպէս կը յիշէ Jacques de Vérone (էջ 220. տե՛ս B. S. N. էջ 188):

Seawulf 1102 ին կը գրէ թէ այն քարը որ կը տեսնուի մսուրին մէջ, Յերոնիմոս բերած դրած է հոն: Նոյն քարը նախապէս դրուած էր Ս. Գերեզմանին մէջ, Քրիստոսի գլխուն տակը (E. T. P. էջ 44):

զ) Բերդեհեմի եկեղեցիին փանդումի մը անյայտօղ ձեռնարկը. — Սուլթան Պիպարս 1263 ին հրամայեց քանդել Բեթղեհէմի եկեղեցին, մարմարեայ սիւնները եւ դրուագները Գահիրէ տանելով զարդարելու իր պալատը և մզկիթը, ու սկսաւ քանդել: Պատճառը չենք գիտեր թէ յետոյ ի՞նչու չկրցաւ իր նպատակը գործադրել, բայց ժողովրդական միտքը այս դէպքին համար բացատրութիւն մը տուաւ:

Եկեղեցիին պատերուն սալաքարերը կը ներկայացնէին սև երակ մը կամ ճեղքուածք մը որ աւագի վրայ սողացող օձի մը նման ալեծածան կ'երկարէր: